

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահրամ Բաղդասարյանի, Գագիկ Մելիքյանի, Վահրամ Մկրտչյանի, Ռուզաննա Մուրադյանի և Կարինե Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-713-05.02.2015-ՍՀ-010/0) վերաբերյալ:

Կամավորականությունը մշտապես եղել և մնում է քաղաքացիական ակտիվության հիմնական տարրերից մեկը և, միանշանակ, ամբողջ աշխարհում կարևորվում է դրա դերը և նշանակությունը: Կամավորականությունը, որպես քաղաքացիական ակտիվության տեսակ, գործում է նաև Հայաստանի Հանրապետությունում: Կամավորականության հարաբերությունների իրավական կարգավորումը տարբեր երկրներում իրականացվում է տարբեր կերպ: Որոշ երկրներում այս ինստիտուտի իրավական կարգավորումն իրակա-

նացվում է մեկ իրավական ակտի շրջանակներում, իսկ մի շարք երկրներում այն կարգավորվում է տարբեր իրավական ակտերով:

Հարկ է նշել, որ նշված ինստիտուտի պրակտիկ կիրառումը կարող է հանգեցնել չարաշահումների: Մտավախությունը կայանում է նրանում, որ կամավորականությունը կարող է չարաշահվել տարբեր կազմակերպությունների կողմից՝ ֆինանսական և հարկային պարտավորություններից խուսափելու նպատակով: Նշված չարաշահումներից խուսափելու համար կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում այս փուլում կամավորականության օրենսդրական կարգավորումն անհրաժեշտ է իրականացնել փուլ առ փուլ՝ այս հարցի կարգավորումը նախատեսելով տարբեր իրավական ակտերով՝ նպատակ ունենալով հասնել հարցի ամբողջական, հստակ օրենսդրական կարգավորմանը: Այսպես՝

1-ին փուլ՝ «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով արդեն իսկ սահմանված են Հայաստանի Հանրապետությունում կամավորներին աշխատանքի ներգրավելու հետ կապված հարաբերությունների որոշակի կարգավորումներ (կամավորի հասկացությունը, կամավորներ ներգրավելու իրավասություն ունեցող կազմակերպությունների շրջանակը, ինչպես նաև կամավորների աշխատանքի կարգավորման վերաբերյալ այլ դրույթներ): Հարցերի որոշակի խումբ նախատեսվում է կարգավորել «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ:

2-րդ փուլ՝ նշված օրենքների կիրառման արդյունքների համակողմանի վերլուծություն և գնահատում:

3-րդ փուլ՝ հաշվի առնելով կամավորականության կարգավորման առաջին երկու փուլերի արդյունքները, ըստ անհրաժեշտության, կարելի է կամ նախաձեռնել փոփոխու-

թյուններ առկա օրենսդրության դրույթներում, կամ մշակել կամավոր աշխատանքի ոլորտը կարգավորող մեկ միասնական իրավական ակտ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է նաև, որ՝

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2001 թվականի դեկտեմբերի 5-ի 56/38 բանաձևը կոչ է անում պետություններին ստեղծել համապատասխան օրենսդրական հիմք՝ ոգեշնչելով մարդկանց կամավորական գործունեություն իրականացնելու հարցում:

Եվրոպայի խորհուրդը ևս խրախուսում է պետությունների կողմից կամավորական գործունեության իրավական կարգավորումը՝ ընդգծելով վերջինիս ուսուցողական և սոցիալական դերակատարությունը և կոչ է անում անդամ պետություններին՝ իրենց բոլոր օրենքներից և պրակտիկայից հանել բոլոր այն արգելքները, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի կերպով խոչընդոտել անձանց կամավորական գործունեությանը զբաղվելուն:

Կամավորական գործունեությունը հստակ կարգավորված է մի շարք երկրներում՝ Խորվաթիա, Լեհաստան, Հունգարիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մակեդոնիա, Չեխիա, Պորտուգալիա, Ռումինիա, Իսպանիա, Գերմանիա և այլն: Կամավորական գործունեությունը կարգավորվում է կամ առանձին իրավական ակտով, կամ հասարակական կազմակերպությունների մասին, կամ հիմնադրամների մասին օրենքներով: Միջազգային ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ կամավորականության մասին դրույթները, որպես կանոն, կիրառվում են ոչ առևտրային կազմակերպությունների կողմից՝ կամավորներին ներգրավելով սոցիալական օգնության, մշակութային, կրթության բնագավառներում և բարեգործական այլ նպատակների իրականացման համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում առկա են չկարգավորված, հստակեցման և խմբագրման կարիք ունեցող դրույթներ: Այսպես՝

1) ներկայացված նախագիծը չհիմնավորված սահմանափակումներ է նախատեսում տարբեր անձանց, կազմակերպությունների համար, ինչը հետագայում օրենքի ընդունումից հետո կարող է բարդացնել կամավոր աշխատանքի իրականացումը.

2) նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն նշված օրենքի գործողությունը չի տարածվում կուսակցությունների, առևտրային և կրոնական կազմակերպությունների օգտին և (կամ) նրանց նախաձեռնությամբ, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության օգտին իրականացվող կամավոր աշխատանքի վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվում են ոչ միայն առևտրային կազմակերպությունները, այլ նաև անհատ ձեռնարկատերերը, անհրաժեշտ է նախագծով սահմանել, որ նշված օրենքի գործողությունը չի տարածվում նաև անհատ ձեռնարկատերերի օգտին և (կամ) նրանց նախաձեռնությամբ իրականացվող կամավոր աշխատանքի վրա.

3) նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ կամավոր աշխատանքի հետ կապված դրույթներ նախատեսված չեն.

4) նախագծի 5-րդ հոդվածի՝

ա. 2-րդ մասի համաձայն կամավոր աշխատանքների կարող են ներգրավվել 16 տարին լրացած անձինք: Գտնում ենք, որ նշված սահմանափակումը հիմնավորված չէ, քանի որ դպրոցական տարիքի երեխաներն ակտիվ կերպով մասնակցում են տարբեր բնույթի բնապահպանական միջոցառումներին և այլն,

բ. 3-րդ մասի և 16-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների միջև առկա է ներքին հակասություն: Մասնավորապես, 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն օտարերկրյա պետու-

թյուններում կամավոր աշխատանքի կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետությունում բնակվող տասնութ տարին լրացած անձինք, իսկ 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կազմակերպություններն իրավունք ունեն օտարերկրյա պետություններում կամավոր աշխատանք իրականացնելու Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամավորների մասնակցությամբ:

Բացի դրանից, հարկ է քննարկել նաև օտարերկրյա պետությունում կամավոր աշխատանք կատարելու համար տարիքային սահմանափակում նախատեսելու նպատակահարմարության հարցը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ շատ դեպքերում օտարերկրյա պետությունում իրականացվող կամավոր աշխատանքը կազմում է կրթական որևէ ծրագրի բաղկացուցիչ մասը,

զ. 4-րդ մասի համաձայն կամավոր աշխատանք կարող է կազմակերպել ոչ առևտրային կազմակերպությունը, եթե կամավոր աշխատանք կազմակերպելու հնարավորություն նախատեսված է վերջինիս կանոնադրությամբ: Միաժամանակ, նախագծով նախատեսված չեն կամավոր աշխատանքի ընդունման սահմանափակումներ, ինչը նշանակում է, որ ոչ առևտրային կազմակերպությունները կարող են առանց սահմանափակման կամավոր աշխատանք կատարելու պայմանագրեր կնքել:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ նման մոտեցումների ընդունման դեպքում կարող են ստեղծվել հարկումից խուսափելու ռիսկեր: Մասնավորապես, ոչ առևտրային կազմակերպությունները կարող են իրենց ոչ կամավոր աշխատանք կատարողներին ձևակերպել որպես կամավոր աշխատանք կատարողներ և չվճարել այդ աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված այլ միջոցներից հաշվարկվող եկամտային հարկը և նպատակային սոցիալական վճարները: Ռիսկերը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է նախագծով սահմանել որոշակի սահմանափակումներ, օրինակ, քանակական.

5) նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝

ա. 3-րդ կետի համաձայն կազմակերպությունն իրավունք ունի ստանալու տեղեկություններ կամավորի կողմից կատարված աշխատանքների մասին, սակայն նշված ձևակերպումից պարզ չէ, թե ում կողմից են տրամադրվում նշված տեղեկությունները,

բ. 4-րդ կետով նախատեսված կազմակերպության կամավորների՝ կամավոր աշխատանքի հետ կապված օրինական իրավունքները և շահերը պաշտպանելու կազմակերպության իրավունքը սահմանող դրույթն անհրաժեշտ է նախատեսել 9-րդ հոդվածում՝ որպես կազմակերպության պարտականություն.

6) նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է խմբագրել՝ տարընթերցումների տեղիք չտալու համար.

7) նախագծի 10-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասի համաձայն կամավոր աշխատանքի պայմանագիրը կնքվում է որոշակի ժամկետով: Այդ կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում համապատասխան լրացում կատարել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասը,

բ. 2-րդ մասում «գրավոր ձևով» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «2 օրինակից» բառերով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի կարգավորումները.

8) նախագծի 11-րդ հոդվածով սահմանվում է կամավոր աշխատանքի պայմանագրի բովանդակությունը: Այդ առումով գտնում ենք, որ նշված հոդվածում անհրաժեշտ էր նախատեսել նաև կամավոր աշխատանքի պայմանագիրը փոփոխելու և դադարեցնելու վերաբերյալ դրույթներ:

Հոդվածի 2-րդ մասում կիրառվող «քիմիական կանխարգելում» հասկացությունը պարզաբանման կարիք ունի.

9) հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը և սահմանում է «կամավորի» հասկացությունը, կարծում ենք, որ համապատասխան կարգավորման բացակայության դեպքում պրակտիկայում կարող են առաջանալ հակասություններ «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և նախագծի միջև.

10) նախագծի 14-րդ հոդվածում անհրաժեշտ է կամավոր աշխատանքի պայմանագիրը փոփոխելու և դադարեցնելու հիմքերի և կարգի վերաբերյալ առավել մանրամասն կարգավորում նախատեսել:

Ողջունելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների նպատակադրումը, գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության ներկայիս փուլում կամավոր աշխատանքի կազմակերպման և իրականացման գործընթացները չբարդացնելու և գործնականում չսահմանափակելու, ինչպես նաև ֆինանսական և հարկային պարտավորություններից խուսափելու նիսկերը նվազագույնին հասցնելու նպատակով կամավոր աշխատանքի օրենսդրական կարգավորումը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է իրականացնել փուլ առ փուլ:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

#### «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

### ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

## Եզրակացություն

### «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ուղղակի կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն**:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### «Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կարգավորվում են կամավոր աշխատանք իրականացնելու հետ կապված հարաբերությունները, սահմանվում են կամավոր աշխատանքի ոլորտները, իրականացման իրավական հիմքերը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### «Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագծով ամրագրվում են կամավոր աշխատանք իրականացնելու իրավական հիմքերը, ինչպես նաև կարգավորվում են կամավոր աշխատանք իրականացնելու հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ սահմանվում են կամավոր աշխատանքի սուբյեկտները, նրանց իրավունքները ու պարտականությունները և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:*

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
վերաբերյալ**

«Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝  
բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերոնշյալ օրենքի գործողությունը չի տարածվում կուսակցությունների, առևտրային և կրոնական կազմակերպությունների օգտին և (կամ) նրանց նախաձեռնությամբ, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության օգտին իրականացվող կամավոր աշխատանքի վրա: Դրա հետ մեկտեղ Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ կամավոր աշխատանք կարող է կազմակերպել ոչ առևտրային կազմակերպությունը, եթե կամավոր աշխատանք կազմակերպելու հնարավորություն նախատեսված է վերջինիս կանոնադրությամբ: Այս առումով, հարկային վարչարարության տեսանկյունից, դժվարություն կառաջանա իրական կամավոր աշխատողներին ոչ իրական կամավոր աշխատողներից (առանց վարձատրության) տարանջատելու համար: Մասնավորապես, ոչ առևտրային կազմակերպությունները կարող են իրենց ոչ կամավոր աշխատանք կատարողներին ձևակերպել որպես կամավոր աշխատանք կատարողներ և արդյունքում խուսափել նրանց համար եկամտային հարկ և նպատակային սոցիալական վճարներ վճարելուց:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն:

Միաժամանակ գտնում ենք, որ Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի և համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-713-05.02.2015-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է կամավոր աշխատանք իրականացնելու հետ կապված հարաբերությունները, սահմանում է կամավոր աշխատանքի ոլորտները, իրականացման իրավական հիմքերը:
2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում կուսակցությունների, առետրային եւ կրոնական կազմակերպությունների օգտին եւ/կամ նրանց նախաձեռնությամբ, ինչպես նաեւ ոչ առետրային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության օգտին իրականացվող կամավոր աշխատանքի վրա:

**Հոդված 2. Կամավոր աշխատանքի իրավական կարգավորումը**

1. Կամավոր աշխատանքը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով եւ այլ իրավական ակտերով:
2. Կամավորների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե սույն օրենքով այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:

**Հոդված 3. Կամավորի եւ կամավոր աշխատանքի հասկացությունները**

1. Սույն օրենքի իմաստով կամավորն այն անձն է, ով կատարում է սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսվող աշխատանքը:
2. Կամավոր աշխատանքը կամավորների կողմից սույն օրենքով նախատեսված պետության, հասարակության, ոչ առետրային կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց համար օգնություն ցուցաբերելու նպատակով կատարվող հանրօգուտ, առանց վարձատրության աշխատանքն է:
3. Աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձն աշխատանքի ժամանակ կարող է ընդգրկվել կամավոր աշխատանքներում գործատուի գրավոր համաձայնությամբ:
4. Կամավոր աշխատանք չի համարվում անձնական շահերի բավարարմանն ուղղված աշխատանքը:

**Հոդված 4. Կամավոր աշխատանքի սկզբունքները**

Կամավոր աշխատանքի սկզբունքներն են՝

1. կամքի ազատությունը.
2. կամավոր աշխատանքի անհատուցելիությունը.
3. մարդասիրությունը:

## **ԳԼՈՒԽ 2. ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **Հոդված 5. Կամավոր աշխատանքի սուբյեկտները**

1. Կամավոր աշխատանքի սուբյեկտներն են կամավորները, սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում նշված, ինչպես նաև կամավոր աշխատանք կազմակերպող կազմակերպությունները, որոնց միջև հարաբերությունները կարգավորվում են կամավոր աշխատանքի մասին օրենսդրությամբ եւ կամավոր աշխատանքի պայմանագրով:
2. Հայաստանի Հանրապետությունում կամավոր աշխատանքի կարող են ներգրավվել տասնվեց տարին լրացած անձինք: Կամավոր կարող են համարվել նաև ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ կամավոր աշխատանք կատարող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք, որոնք կարող են ներգրավվել սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված աշխատանքներում:
3. Օտարերկրյա պետություններում կամավոր աշխատանքի կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետությունում բնակվող տասնութ տարին լրացած անձինք:
4. Կամավոր աշխատանք կազմակերպող կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն) է այն ոչ առետրային կազմակերպությունը, որը կազմակերպում, օգտագործում կամ նպատակաուղղում է կամավոր աշխատանքը, ինչը նախատեսված է կազմակերպության կանոնադրությամբ:

### **Հոդված 6. Կամավորների իրավունքները**

1. Կամավորներն ունեն հետևյալ իրավունքները՝
  - 1) կազմակերպությունից ստանալ տեղեկատվություն, կողմնորոշում եւ աջակցություն.
  - 2) իրենց կամավոր աշխատանքի իրականացման հետ կապված օրենսդրությամբ սահմանված գործուղման, ինչպես նաև այլ հիմնավորված ծախսերի փոխհատուցման, եթե այլ բան նախատեսված չէ կամավոր աշխատանքի պայմանագրում.
  - 3) կամավոր աշխատանքի իրականացման ժամանակ վնասվածքներ ստանալու, կամ այդ աշխատանքի իրականացման ընթացքում հիվանդություն ձեռք բերելու դեպքում բժշկական ապահովագրության եւ վնասի հատուցման իրավունք, եթե դա նախատեսված է կամավորի հետ կնքված պայմանագրով.
  - 4) շաբաթական երկու հանգստյան օրվա՝ իրենց ընտրությամբ.
  - 5) տարածելու իր կամավոր աշխատանքի մասին տեղեկություններ՝ բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի.
  - 6) կազմակերպության հետ կնքելու կամավոր աշխատանքի պայմանագիր.
  - 7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ կամավոր աշխատանքի պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ:

### **Հոդված 7. Կազմակերպության իրավունքները**

1. Կազմակերպությունն իրավունք ունի՝
  - 1) դիմելու եւ տեղեկություններ ստանալու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից կամավոր աշխատանք կատարելու անհրաժեշտություն ունեցող բնագավառների եւ վայրերի մասին.

- 2) սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված աշխատանք իրականացնելու համար կամավորներ ներգրավելու.
- 3) ստանալու տեղեկություններ կամավորի կողմից կատարված աշխատանքների մասին.
- 4) պաշտպանել կազմակերպության կամավորների՝ կամավոր աշխատանքի հետ կապված օրինական իրավունքները եւ շահերը.
- 5) կամավորներից ստանալու նրանց որակավորմանը վերաբերող փաստաթղթեր եւ այլ անձանց ներկայացնել կամավորների վերաբերյալ երաշխավորագրեր.
- 6) կազմակերպել կամավոր աշխատանքներ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաեւ ոչ առևտրային կազմակերպությունների եւ ֆիզիկական անձանց օգտին՝ նրանց համաձայնությամբ կնքելով համապատասխան պայմանագիր:

### **Հոդված 8. Կամավորի պարտականությունները**

#### 1. Կամավորը պարտավոր է՝

- 1) կամավոր աշխատանք կատարել սույն օրենքով ամրագրված սկզբունքներին եւ կամավոր աշխատանքի պայմանագրին համապատասխան.
- 2) չտարածել կամավոր աշխատանք իրականացնելու ընթացքում մարդու կյանքի եւ առողջության մասին իրեն հայտնի դարձած, ինչպես նաեւ կամավոր աշխատանքի պայմանագրով նախատեսված այլ տեղեկություններ.
- 3) նպատակային օգտագործել կազմակերպության հատկացրած միջոցները.
- 4) պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները.
- 5) պահպանել առողջության պահպանման եւ անվտանգության ապահովման հիմնական կանոններն ու նորմերը.
- 6) իր աշխատանքի հետեւանքով պատճառված նյութական վնասը հատուցել լրիվ ծավալով, եթե առկա է իր մեղքը կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 7) կազմակերպության պահանջով տրամադրել իր կողմից կատարվող կամավոր աշխատանքի մասին տեղեկատվություն:

### **Հոդված 9. Կազմակերպության պարտականությունները**

#### 1. Կազմակերպությունը պարտավոր է՝

- 1) ստեղծել կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ պայմաններ.
- 2) կամավորին հատուցել կամավոր աշխատանք իրականացնելու հետ կապված գործուղման, ինչպես նաեւ այլ հիմնավորված ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ կամավոր աշխատանքի պայմանագրում.
- 3) ապահովել կամավորների աշխատանքի անվտանգության պահպանման նորմերը, մինչեւ կամավորի աշխատանքի անցնելը կամավորների հետ անցկացնել առողջության պահպանման, անվտանգության ապահովման հիմնական կանոնների եւ կատարվող աշխատանքների առանձնահատկությունների վերաբերյալ հրահանգավորում.
- 4) կազմակերպության միջոցների հաշվին ապահովել կամավորի պարտադիր բժշկական զննությունը, եթե կամավորը կատարում է այնպիսի աշխատանքներ, որոնց իրականացման համար նման հետազոտության պահանջը սահմանվում է օրենսդրությամբ.

5) մինչև աշխատանքի թույլատրելը կամավորի հետ գրավոր կնքել կամավոր աշխատանքի պայմանագիր.

6) վերահսկել կամավորների աշխատանքը.

7) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ կամավորի հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ:

2. Կազմակերպությունը կամավորի՝ գործողության կամ անգործության հետեւանքով անձին պատճառած նյութական վնասը հատուցում է լրիվ ծավալով, եթե կազմակերպությունը կամավորին չի տեղեկացրել կատարվող աշխատանքների առանձնահատկությունների մասին, եթե առկա չէ կամավորի մեղքը:

### **ԳԼՈՒԽ 3. ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

#### **Հոդված 10. Կամավոր աշխատանքի պայմանագրի հասկացությունը**

1. Կամավոր աշխատանքի պայմանագիրը համաձայնություն է կամավորի եւ կազմակերպության միջեւ կամավոր աշխատանքներ կատարելու մասին, որը կնքվում է որոշակի ժամկետով, եւ որի հիման վրա կամավորն իր կամքով, առանց վարձատրության իրականացնում է կամավոր աշխատանք:

2. Կամավոր աշխատանքի պայմանագիրը կնքվում է գրավոր ձեւով՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

3. Կազմակերպության աշխատողի հետ միեւնույն կազմակերպությունը չի կարող կնքել կամավոր աշխատանքի պայմանագիր:

#### **Հոդված 11. Կամավոր աշխատանքի պայմանագրի բովանդակությունը**

1. Կամավոր աշխատանքի պայմանագրում նշվում են՝

1) պայմանագիր կնքող կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության անունից պայմանագիրը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաեւ հայրանունը.

2) կամավորի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաեւ հայրանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, բնակության վայրը.

3) կամավորի անձը հաստատող փաստաթղթի վավերապայմանները,

4) պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը.

5) աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը.

6) կամավորի պաշտոնի անվանումը եւ /կամ/ գործառույթները, աշխատանք կատարելու հետ կապված հնարավոր ռիսկը, կատարելու վայրը.

7) պայմանագրի գործողության ժամկետները, աշխատաժամանակի տեւողությունը օրվա ընթացքում.

8) կամավոր աշխատանքն իրականացնելու կարգը եւ պայմանները:

2. Անհրաժեշտության դեպքում պայմանագրում պետք է նշվի նաեւ կանխարգելիչ պատվաստումների եւ (կամ) քիմիական կանխարգելման մասին:

**Հողված 12. Պեղական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ոչ առետրային կազմակերպությունների օգտին կամավոր աշխատանքի կազմակերպման պայմանագրի բովանդակությունը**

1. Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ոչ առետրային կազմակերպությունների (այսուհետ՝ ընդունող կազմակերպություն) օգտին կամավոր աշխատանքի կազմակերպման պայմանագրում պետք է նշվեն ընդունող կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կամավոր աշխատանքների կատարման առարկան, կատարման ժամկետները, կատարման վայրը, կամավորների թիվը, աշխատաժամանակի տեղությունը:
2. Սույն հողվածի 1-ին մասում սահմանված պայմանագրում նշվում է նաեւ կամավորների կյանքին կամ առողջությանը վտանգ ներկայացնող ռիսկերը վերացնելու կամ նվազեցնելու վերաբերյալ ընդունող կազմակերպության պարտավորությունը:
3. Կողմերի նախաձեռնությամբ պայմանագրով կարող են սահմանվել սույն օրենքին չհակասող այլ պայմաններ:

**Հողված 13. Կամավոր աշխատանք կատարելու ռեժիմը**

1. Յուրաքանչյուր անձ կամավոր աշխատանքի կարող է ներգրավվել՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատաժամանակի եւ հանգստի ժամանակի սահմանափակումները:

**Հողված 14. Կամավոր աշխատանքի պայմանագիրը փոփոխելու եւ դադարեցնելու հիմքերը եւ կարգը**

1. Կամավոր աշխատանքի պայմանագիրը կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ:
2. Կամավոր աշխատանքի պայմանագիրը կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ:

**Հողված 15. Կամավոր աշխատանքներին առանձին կատարողիայի անձանց մասնակցության առանձնահատկությունները**

1. Կամավոր աշխատանքներին մինչեւ տասնութ տարեկան անձանց, հղի կամ մինչեւ մեկ տարեկան երեխա խնամող կամ երեխային կրծքով կերակրող կանանց մասնակցությունը կազմակերպվում է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները:

**ԳԼՈՒԽ 4. ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Հողված 16. Կամավոր աշխատանքների կազմակերպումը օտարերկրյա պետություններում եւ օտարերկրացի կամավորների աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում**

1. Կազմակերպություններն իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամավորների մասնակցությամբ կամավոր աշխատանք իրականացնել օտարերկրյա պետություններում՝ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպությունների հրավերով:
2. Օտարերկրյա պետություններում կամավոր աշխատանքների կատարումը կարգավորվում է ընդունող պետության օրենսդրությանը համապատասխան եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

3. Կազմակերպություններն իրավունք ունեն հրավիրել օտարերկրացի կամավորներ՝ Հայաստանի տարածքում սույն օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանք իրականացնելու նպատակով:

4. Սույն հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերով սահմանված դեպքերում կամավորի գործուղման, ինչպես նաեւ այլ հիմնավորված ծախսերի հատուցումը իրականացվում է կազմակերպության կամ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության միջոցների հաշվին:

#### **ԳԼՈՒԽ 5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

##### **Հոդված 17. Վեճերի լուծումը եւ պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու համար**

1. Սույն օրենքի կիրառման հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

2. Սույն օրենքի պահանջները խախտող անձինք կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

#### **ԳԼՈՒԽ 6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

##### **Հոդված 18. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

#### **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

##### **«Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների անհրաժեշտությամբ՝ համաձայն որի. «Կամավոր աշխատանքը եւ օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքը չեն կարող համարվել անօրինական: Այդպիսի աշխատանքների կատարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով»: Օրենքի ընդունմամբ կկարգավորվեն կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները, ոլորտները եւ իրավական հիմքերը, հաշվի առնելով, որ կամավոր աշխատանքը կամավորների կողմից պետության, հասարակության, ոչ առետրային կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց համար օգնություն ցուցաբերելու նպատակով կատարվող հանրօգուտ, անհատույց, առանց վարձատրության աշխատանքն է: